

Կասիային գլխաւոր մէկ տեսակն ալ գատաղնաչե կառիա՝ ըսուածնէ , որ 40^{էն} մինչև 50 ոտք բարձր կ'ըլլայ , տերեները խոշոր , ծաղկըները մեծ , գեղնազոյն , որ ողկուղաձե տերեներուն արմատէն կը կախուին : Պտուղը եղէզնաձե է և կարծրակեղե , բազկաչափ երկայն և բթաչափ հաստ , որուն զոյնը սկզբան կանանչ կ'ըլլայ , ետքը կամաց կամաց կը սկսի սենալ . մէջը խորշ խորշ մածուցիկ և սե թանձրամած հիւթ մը ունի որ մեղեր նման անոյշ է . այս խորշերը թաղանթով մը մէկմէկէ կը բաժնուին , և իւրաքանչիւր խորշ եղջերենոյ կուտին նման խոշոր կուտ մը ունի , և հիւթը ազնիւ դեղ է ընդդէմ որովայնի պնդութեան :

ԲՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ՈՒՐՈՒԹԷԿ ԳՐԾԵ :

ՈՒՐՈՒՏԱԴԻՏ ըսուած զործին մոզական լապտերին նման է , որով տեսակ տեսակ ուրուական երեսոյթներ կը ցուցուին : Տեղը կամ սենեակը ուր որ այս տեսակ երեսոյթներ պիտի ցուցուին՝ բոլորովին մէրնցած պիտի ըլլայ , ու բարակ մոմսպատ լաթով մը կամ պարզ կտաւէ լաթով մը երկու մաս բաժնած : Այս ահաւոր մժութեան ատեն կը սկսի լաթին վրայ երենալ պատի կլոր լոյս մը , որուն մէջ հազիւ թէ առարկան կ'երեւայ զոր կ'ուզենք տեսնել , որ իրեն պզտիկութեանը համար շատ հեռու կը կարծուի : Անջի բերան այս առարկան կամաց կամաց կը մեծնայ , և ետքը արագ արագ , այնպէս որ իրեն ամէն մանր մասերը , գոյները , յայսոնի կը տեսնուին : Ո՞եծնալը շատ արագ ըլլալուն համար այնպէս կը կարծուի , իբր թէ առարկան կը յարձակի դիտողներուն վրայ , ինչուան շատ մը մեծնա-

լով՝ մէկէն աներեւոյթ կ'ըլլայ : Եւ որովհետև սովորաբար այնպիսի առարկաներ կ'ընտրուին որ մարդուս վրայ վախ կը ձգեն , ուստի արագութեամբ մեծնալու ու մօտենալու ատենը կը վախցունեն զուրիշը , ինչուան նաև երեսութին պատճառը գիտցողներն ալ :

Խաղցրնողին վարպետութիւնը այս պիտի ըլլայ որ աստիճանաբար մեծցրնէ առարկային պատկերը , ու այնպէս կանոնաւորէ լապտերին լոյսը , որ միտքեթէ նոյն մնայ : Առարկաները կը նկարուին ապակիէ բարակ թիթեղի վրայ , կենդանի գոյներով , և կը լուսաւորին արուեստական լուսով մը հաւաքիչ ոսպնաձեի՝ մը ետևէն : Այս ոսպնաձեը դրուած է գոյ սնտուկի մը մէջ , ուսկից ուրիշ լոյս դուրս չելլեր . բաց ՚ի այն լուսէն որ կ'անցնի ոսպնաձեին ու նկարուած ապակւոյն մէջէն :

Առարկան կը դրուի ոսպնաձեին առանցքին վրայ , ուսկից եթէ 48 բթաշափ հեռու դնելու ըլլանք , ու ոսպնաձեը 16 բթաչափի կտաւէն հեռու , կը տաւին վրայ պատկեր մը կ'երենայ բթաչափին երրորդ մաս մեծութեամբ . վերջը կամաց կամաց առարկային ոսպնաձեէն ունեցած հեռաւորութիւնը պակսեցընելով , ու ոսպնաձեին լաթէն ունեցած հեռաւորութիւնը աւելցընելով , առարկային պատկերը սկզբան կամաց կամաց կը մեծնայ , ու երթալով սաստիկ արագութեամբ , ինչ պէս որ հետևեալ աղիւսակը կը ցուցընէ , ինչուան որ առարկան ոսպնաձեին վառարանին համար լուսվ , պատկերը աներեսոյթ կ'ըլլայ կտաւին վրայէն :

Ուստի գործին այնպէս շինած պիտի ըլլայ , որ աստիճանաբար կարենայ առարկան ոսպնաձեին մօտենալ , և միան գամայն ոսպնաձեը լաթէն հեռանալ : Անջին խաբէութիւնը կատարեալընելու համար , պէտք է պատկերին մեծնալուն համեմատ առարկային լուսաւորութիւնը աւելցընել , որպէս զի պատ-

1 Լու . C. fistula. ըստ Վինն :

2 Գղ . Fantasmagorie.

1 Հաւատիւ ոսպնաձե կ'ըսուին անոնք որ լուսոյ ձառագայթները կ'ամփոփեն մէկ կէտի վրայ :

կերը շատ մեծնալու ատեն նուազ է բենայ :

Հետևեալ աղիւսակիս մէջ կը դնենք առարկային ոսպնաձեւն ու ոսպնաձեւն լաթէն ունեցած զանազան հեռաւորութիւններուն չափը, և անոնց համեմատ պատկերին մեծնալը :

Առարկային ոսպնաձեւն ունեցածներունը :	Ոսպնաձեւն կը առաւելն ունեցածներունը :	Պատկերին մեծնալը :
--------------------------------------	---------------------------------------	--------------------

48 բթաչափ .	16 բթաչափ .	1/3 բթաչափ .
36 "	18 "	1/2 "
24 "	24 "	1 "
18 "	36 "	2 "
16 "	48 "	3 "
14 "	84 "	6 "
13 "	156 "	12 "
12 1/2 "	648 "	24 "
12 "	և այլն	և այլն

Այս աղիւսակը գրուած է մէկ ոսպնաձեւի համար, բայց կրնայ նաև երկու ոսպնաձեւ գործածուիլ, որով արգասիքն ալ աւելի մեծ կ'ըլլայ : Երկու ոսպնաձեւները գրուած պիտի ըլլան մի և նոյն առանցքի վրայ :

Հոս դնենք ուրիշ աղիւսակ մ'ալ երկու ոսպնաձեւի համար, որուն մէջ առարկային առաջին ոսպնաձեւն ունեցած հեռաւորութիւնը միշտ անփոփոխ է, և է 4 բթաչափ . և երկրորդ ոսպնաձեւը մօտենալով կամ հեռանալով առջինէն կը մեծցընէ կամ կը պատիկցընէ առարկային պատկերը :

Առարկային երկորդ ոսպնաձեւնը :	Երկրորդ ոսպնաձեւնը :	Պատկերին մեծնալը :
-------------------------------	----------------------	--------------------

40 բթաչափ .	16 բթաչափ .	2/3 բթաչափ .
28 "	18 "	1 "
16 "	24 "	2 "
10 "	36 "	4 "
8 "	48 "	6 "
6 "	84 "	12 "
5 "	156 "	24 "
4 1/2 "	648 "	48 "

Այս աղիւսակէս յայտնի կը տեսնուի որ առարկային պատկերը երկու ոսպնաձեւով կրկնապատիկ աւելի կը մեծնայ

քան թէ մէկ ոսպնաձեւով . այս ալ պէտք է գիտնալ, որ գործին թէ մէկ ոսպնաձեւով ըլլայ և թէ երկու ոսպնաձեւով, առարկային պատկերը միշտ շրջուն կ'երեցընէ, ուստի որպէս զի ուղիղ երեցընէ, պէտք է առարկան շրջուն դիրքով դնել գործւոյն մէջ :

Հ . Մ . Ս Ո Ֆ .

ԲԱՆԱՍՏԵԴԱՌԻԹԻՒԴԻՆ

ԼՐԻԴ ՀԱՅՐԷԿԻ :

ՈՒՐՉԴԻԵՌ ՅՈՒՍՈՎ ԽԱՅՄԱՅ ՔՆՈՒԹԻՆ
Ետ դառնաշունչ ձըմերանւոյն,
Եւ 'ի գաւառն իմ հայրենի
Վեղածիծաղ դառնայ գարուն,
Ո՛ինչ բոյր 'ի բոյր փթթին ծաղկունք
Եւ ձըւուողեն նորեկ ծիծուունք,
Ի քեզ ես գարծ առնեմ յայնժամ
Ո՛վ ցանկալիդ իմ հայաստան :

Ո՛չ հելուետեան ինձ դաշտավայրք
Եւ կամ զըւարթ մարգագետինք
Ո՛չ քան ըզքեզ ըզքնաղագեզ
Խտալական պայծառ երկինք:
Հեռի 'ի քէն պանդուխտ գոլով
Քոյովըդ յար տապիմ անձկով.
Ի խանձարուրդ իմոց կենաց
Ո՛վ հայաստան առնեմ ես գարծ :

Գայցեն աւուրիք ուր մանկութեան
Կնկցի տիոցս իմ գեղ դալար,
Եւ յինէն խոյս տացեն վայելք
Կենաց թեթև 'ի գարշապար .
Ուր հէք մուսայս մասն ի յերեր
Ո՛ուանայցէ երգել ըզսէր,
Ո՞նինջ 'ի ծոցդ առնում յայնժամ
Ո՛վ ցանկալիդ իմ հայաստան :

ՄԿՐՏՉՉ ՊԵՇԻՔ ԹԱՎԱԼԵԱՆ
ՅԱՀԱԿԵՐՑԱՑ ՄՈՒՐԵՑ . ՎԱՐԺ .

(Կմանողութեամբ Quant tout repaire :)